ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ձեռնարկատիրությունը, որպես գործունեության ձև, մեր հանրապետությունում գործնականում չեր կիրառվում: Սակայն կապիտալիստական զարգացած շատ երկրներում տնտեսական և սոցիալական զարգացման գործում այն համարվում է հզոր շարժիչ ուժ: Առանց դրա չկա արդյունավետ տնտեսություն, չկա լավագույն շուկա, չկա բիզնես: Հետևաբար առանց ձեռնարկատիրության չեն կարող բավարարել մարդկանց պահանջմունքները: Ձեռնարկատիրությունն անվիճելի տեղ ունի ներկա շուկայական հարաբերությունների համակարգում:

Շուկայական տնտեսություն ունեցող զարգացող երկրներում վերջին տարիներին ձեռնարկատիրությունը ազատ վերելք է ապրում: Մարդիկ հրապուրվում են բիզնեսով, որն սկսում են անձնական ոչ մեծ գործից: Դրա արդյունավետությունը ակնառու կերպով երևում է կատարվող աշխատանքների վերջնական արդյունքում:

Ձեռնարկատիրությունը խթան է հետևյալ գործոնների արդյունավետ իրականացման համար.

1. Տեխնիկական առաջընթացի, որի դեպքում ստեղծված է ժամանակակից արտադրողական տեխնիկա, նորագույն տեխնոլոգիաներ՝ անհատական օգտագործման նպատակով: Մեծանում է բնակչությանը տեղեկատվություն հաղորդելու նշանակությունը, ակտիվանում է տեղեկատվության դերը:

2. Մարդկանց անհատական և հասարակական պահանջների բավարարման, որի հիմքում ևս գիտատեխնիկական առաջընթացն է, դա տարբերվում է նախորդիներից ոչ միայն նրանով, թե ի՞նչ աշպատանքի առարկաներով են արտադրվում վերջնական արդյունքները, այլ թե ինչպիսի՞ սպառողական ապրանքներ են թողարկվում: Ներկայումս մարդկանց

պահանջմունքները բազմաբնույթ են: Այս տեսակետից էլ այն խթան է ձեռնարկատիրության ոլորտի ակտիվացման համար:

Վերը նշվածները ապահովում են արտադրության արդյունավետության աճ, որի հետևանքով ստեղծվում են բազմաթիվ նորույթներ:

Նորածությունները, որոնց հիմքում նոր տեխնիկայի ժամանակակից միջոցներն ու նորագույն տեխնոլոգիաներն են, հանդիսանում են արտադրության աճի շարժիչներ և հասարակության մեջ բարձրացնում են ձեռնարկատիրության նշանակությունը:

Ձեռնարկատիրության բարգավաճման երրորդ գործոնը՝ վերջին տարիներին, դրա քաղաքականությունն է, այսինքն՝ այն աստիճանաբար վերաճում է կորպորատիվային (ներխմբակային) կապիտալիզմի դեմոկրատական հասարակության խառը էկոնոմիկայի, որը բնութագրում է այդ հասարակության մեջ իրական՝ հավասար հնարավորություններով տարբեր ձևերի սեփականություններ:

Մյուս բնութագրական գիծը ձեռնարկատիրական կառավարման գործելակերպն է, այսինքն՝ գնորդների հանդեպ կատարվող ծառայությունները: Բիզնեսի բնագավառի ականավոր մասնագետ Պիտեր Դրակերը գրել է. «Բիզնեսի նպատակի որոշման համար, գոյություն ունի միայն մեկ ճշմարտություն՝ ունենալ սպառող: Դրա համար էլ ձեռնարկատերը մտածում է իր արտադրանքի իրացման, ամենագլխավորը՝ բիզնեսի հետագա հաջողության մասին: Իսկ սպառողը մտածում է գնումների, ապրանքների արժեքների մասին, որոնք նշանակություն ունեն և որոշում են բիզնեսի էությունը, ուղղվածությունն ու հնարավորությունը ապագա հաջողություններում»:

Այսօր որպես առաջնային խնդիր, անհրաժեշտ է ստեղծել համալիր մոտեցումներ ձեռնարկատիրության գործունեությանը, այդ թվում, իրականացնել սեփականաշնորհում, առանց որի հնարավոր չէ նորամուծությունների լայնածավալ տարածումը: Հաջորդ կարևոր պայմանը համարվում է փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումը, որոնք զգալի չափով ապապետականացնում են ամբողջ կառավարման համակարգը, և հնարավորություններ ստեղծում ավելի արդյունավետ տեղաբաշխել աշխատանքի հասարակական բաժանման ֆունկցիաները: Փոքր և միջին

ձեռնարկությունները, որոնք հիմք են հանդիսանում արդյունաբերության վերագործարկման համար ձեռնարկատիրության կարևոր պայման է, դրանք պետք է վերածվեն խոշորների և օբյեկտիվորեն առաջանում են հասարակական արտադրության զարգացման, աշխատանքի բաժանման, զանգվածային ու միջին սերիական արտադրություններում մասնագիտացման հիմքերի վրա: Յուրաքանչյուր արտադրության տնտեսական կառուցվածքն ունի մի շարք՝ մեկը մյուսին լրացնող սկզբունքներ, ըստ որի դժվար է «շրջվել» դեպի խոշոր ձեռնարկությունները: Այստեղ արդյունավետ չէ բյուրոկրատացման ուժը, կառավարման համակարգերի կամ էլ շուկայի աննախադեպ մոնոպոլացման նշանակությունը:

Արևմտյան Եվրոպայում՝ ԱՄՆ-ում, Ճապոնիայում կարևոր գործոն է համարվում մենաշնորհային՝ միտումը էկոնոմիկայում, ըստ որի զարգանում են փոքր և միջին ձեռնարկությունները: Նշված պետություններում ձեռնարկություններ օգտվում են պետության ֆինանսական աջակցությունից, դրանց տրվում են հարկային զեղչեր, որոնք թեթևացնում են նախասկզբնական կապիտալի կուտակման խնդիրները: Որպես կանոն, փոքր բիզնեսի գործունեությունը կրում է կենտրոնացված բնույթ, թույլատրում է շատ թե քիչ նախասկզբնական կապիտալի ներդրման դեպքում ունենալ իր գնորդները և մրցակցել խոշոր ձեռնարկությունների հետ:

Փոքր և միջին ձեռնարկությունները, հանդիսանալով խոշոր ձեռնարկությունների վերագործարկման նախատիպեր, որպես կանոն, պատկանում են ռիսկային բիզնեսի ոլորտին, այսինքն՝ յուրաքանչյուր 10 այդպիսի ձեռնարկություններից մնում են 2-3-ը: Մեծամասամբ նմանատիպ ձեռնարկությունները գլխավորում են գիտնականներ, ինժեներներ, գյուտարարներ, արտադրության փորձառու աշխատողներ, որոնք ինչքան հնարավոր է արագ ներ են դնում իրենց գաղափարները՝ գյուտերը կամ էլ տեխնիկական, կառավարման նորագույն մեթոդները:

Փոքր բիզնեսը, բացի այդ հնարավորություն է տալիս լուծելու մի շարք սոցիալական խնդիրներ, որոնք ծագում են շուկայական տնտեսության պայմաններում: Օրինակ, զբաղվածության, եկամուտների ավելացման, մարդու ստեղծագործական պոտենցիալի ակտիվացման, նրա ընտանիքի,

կամ մարդկանց ոչ մեծ խմբի ընդհանուր հետաքրքրությունների միավորման և այլնի հետ կապված խնդիրները: Սակայն պետք է նշել, որ փոքր բիզնեսով զբաղվողները սոցիալապես հավասար պայմաններում չեն ու փոքր ձեռնարկատիրության մատչելությունը չնայած, որ հրապուրում է շատերին, նրանց մի մասի գործունեությունը լինում է անարդյունավետ:

Գործնականում փոքր և միջին ձեռնարկությունները կապիտալիստական զարգացած երկրներում մեծ տեսակարար կշիռ ունեն: Դրանք առաջադեմ՝ բարձր տեխնոլոգիական, մասնագիտացված արտադրական և գիտաարտադրական համալիրներ են, որոնք զբաղվում են որոշակի գործունեությամբ և արտադրում են այնպիսի արդյունաբերական ապրանքներ, որոնք իրացվում են միջազգային ու ներքին շուկաներում:

Փոքր և միջին ձեռնարկությունները, նախ և առաջ, կապված են գործարար շրջանների, և տարբեր երկրների կառավարությունների հետ: Արտադրության ինտենսիվացման գործընթացների արագացման, նոր տեխնիկայի ու ռեսուրսախնայող տեխնոլոգիաների հիմքով փոքր և միջին ձեռնարկություններում ներ են դրվում տարատեսակ տեխնոլոգիական գործառնություններ: Փոքր և միջին ձեռնարկությունները Ճապոնիայում կոչվում են ավտոմատ-գործարարներ, դրանցում արտադրվում է համախառն ազգային եկամտի 60-70%-ը, միաժամանակ լուծելով բնակչության 2/3-ի զբաղվածության հարցը:

Փոքր և միջին ձեռնարկություններում, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ստացվում է բարձր արդյունավետություն այնպիսի գործոնների հաշվին, ինչպիսիք են՝ ռեսուրսախնայողությունը, կառավարման ծախսերի տնտեսումն ու ճկունությունը, որոնք հակազդում են շուկայի իրավիճակին, ստեղծելով աշխատողների ստեղծագործական և աշխատանքային ակտիվություն: Այդ կենտրոնացված արտադրությունը էկոնոմիկայի տվյալ ճյուղում կապված է աշխատանքի բաժանման և մասնագիտացման հետ: Բացի այդ, դա փոքր բիզնեսի խթանն է, որը նշանակալից դեր ունի երկրի տնտեսության համար: Այսինքն, փոքր բիզնեսը արդյունաբերության վերագործարկման հիմքն է:

Պետությունը իր ձեռքում է պահում տնտեսական լծակները՝ հարկային և բյուջետային ֆինանսավորումը, պետական նպաստների ու զեղչերի համակարգը: Այդ լծակները շուկայական տնտեսությունում արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության դրսևորման, գիտատեխնիկական առաջընթացի հիմքով կարող են ամբողջ տնտեսությունը տանել դեպի վերակառուցման կառուցվածքային ուղի:

Արևմտյան Եվրոպայի երկրներում փոքր և միջին ձեռնարկությունները, ձեռնարկատիրության ամբողջ կառուցվածքով, կապված են ապապետականացման և սեփականաշնորհման գործընթացների հետ: Այդ գործընթացները կարելի է զարգացնել արտադրության խոշորացման ճանապարհով:

Խոշոր արտադրական օբյեկտների վերագործարկման համար հիմք է հանդիսանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, օրինակ Ճապոնիայի նմանատիպ ձեռնարկություններում աշխատում են մոտ 50 հոգի:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արտասահմանյան կապիտալի ներգրավումով ստեղծվում են համատեղ ձեռնարկություններ, դրանց եկամուտների հաշվին տեղի են ունենում հիմնական արտադրական ֆոնդրի նորացում, նոր տեխնիկայի և նորագույն տեխնոլոգիաների յուրացում, կադրերի վերապատրաստում ու որակավորման բարձրացում, որոնք հանրապետության արդյունաբերության վերագործարկման ու հետագա զարգացման կարևորագույն գործոններն են: